

ՀԱՅ ՀՈՂԻ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻՆ



«Իսկական զինվորը կոչվում է ոչ թե դիմացինի նկատմամբ արելությունից դրդված, այլ սիրելով այն, ինչ պաշտպանում է թիկունքում...»

Գիլբերտ Կ. Չեստերտոն

Այս օրերին, երբ Արցախի սահմաններում սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով խաթարվել է մեր խաղաղությունը, առանձնակի ջերմեռանդությամբ է հնչում մեր մայրերի՝ Տիրամորն ուղղված բարեխոսական աղոթքը, որպեսզի լռեն պատերազմները, դադարեն թշնամու հարձակումները, և երկրի վրա հաստատվեն սերն ու արդարությունը:

Առաջնային գծում սրեղծված աննախադեպ լարվածությանը առանձնակի փրամադրությամբ արձագանքեցին Արցախի ազադամարտիկներից շարքերը, նույնիսկ բազմաթիվ կամավորներ, ովքեր առանց վարանելու, կամավոր մեկնեցին առաջնագիծ՝ հայ զինվորի հետ սրանձնելու մեր երկրի սահմանների պաշտպանությունը:

Հայրենիքի համար ամենադժվարին պահին Արցախյան ազադամարտի մասնակիցն ու այսօրվա բանակի զինվորը եղել ու շարունակում են մնալ կողք-կողքի: Հարյուրավոր ազադամարտիկներ՝ սրբի կանչով միանալով երկրի պաշտպանության սուրբ գործին, իրենց պատրաստակամությունը հայրենիքին առաջնային գծի ամենադժվարին հարվածներում մարտական հերթապահություն իրականացնել այնքան ժամանակ, որքան պահանջում է հարազատ երկրի անվտանգությունն ու նրա սահմանների անառիկությունը:

Իսկ սահմանին կանգնած քաջերն ամեն օր, ամեն ժամ ապացուցում են, որ իրենք ունեն բարձր պատրաստվածություն, խիզախություն, հայի ոգի և հայրենի սահմանը պաշտպանելու իրավունք: Ամեն զինվորի համար մի ողջ ազգ է աղոթում: Եվ այդ զինվորներից յուրաքանչյուրն իր հերթին մի ողջ ազգի խաղաղությունն է ապահովում:

Թող ամեն մի զինվորի ձեռքով վաստակված, քայլ առ քայլ կառուցվող խաղաղությունը լինի հարապը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ՀՀ կառավարության հերթական նիստը վարել է ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը: Նախքան նիստի օրակարգային հարցերի քննարկմանն անցնելը, Հովիկ Աբրահամյանը կշռել է. «Ապրիլից ի վեր կոպտորեն խախտելով զինադադարի մասին համաձայնագրերը՝ Ադրբեջանի զինված ուժերը լայնածավալ ռազմական ագրեսիա են սանձազերծել Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի միջև՝ շփման գծի ողջ երկայնքով: Ծանր հրետանու, տանկերի և օդուժի հարձակման թիրախ են դարձել Լեռնային Ղարաբաղի պաշտպանական բանակի դիրքերը, քաղաքացիական օբյեկտները և բնակավայրերը, որի հետևանքով ունենք նաև զոհեր»: Այնուհետև ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը մանրամասներ է ներկայացրել ղարաբաղա-ադրբեջանական շփման գծում տիրող իրավիճակի վերաբերյալ:

Կառավարությունը հաստատել է նաև ՀՀ 2016թ. պետբյուջեով նախատեսված հատկացումների հաշվին, աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության միջոցառումները: Ըստ հիմնավորման՝ աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով, պետական աջակցությամբ իրականացվող բնակապահովման ծրագրի շահառու ճանաչված 5363 ընտանիքից, 2016թ. սկզբի դրությամբ, դեռևս կարգավորված չէ մոտ 920 ընտանիքի բնակարանային ապահովման խնդիրը, որի լուծմանը նախատեսվում է անդրադառնալ 2016-2017թթ. ընթացքում՝ փուլային մոտեցման կիրառմամբ: Կառավարության որոշմամբ՝ նախատեսվում է պետբյուջեով նախատեսված միջոցների հաշվին առաջնահերթ կարգով անդրադառնալ 183 ընտանիքի բնակարանային խնդիրների լուծմանը, որոնցից մոտ 100-ը՝ Գյումրիում, 50-ը՝ Սպիտակում, իսկ 33-ը՝ Ախուրյան համայնքում (պետբյուջեով միջոցներ են նախատեսվել ևս 104 ընտանիքի համար Ախուրյան համայնքում կառուցվող 3 բազմաբնակարան շենքերի շինարարական աշխատանքների վերսկսման համար): Սահմանվում են նաև այդ ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման ուղղությունները, մասնավորապես՝ առաջադրվում է Գյումրիում և Ախուրյանում ծրագրի շահառու ճանաչված ընտանիքների բնակապահովման խնդիրը լուծել բնակարանի (բնակելի տան) ձեռքբերման նպատակով բնակարանի գնման վկայագրի միջոցով՝ ֆինանսական աջակցության տրամադրմամբ, իսկ Սպիտակում ծրագրի շահառու ճանաչված և մեկ սենյակի հավակնող ընտանիքներին՝ ուղղակի ֆինանսական աջակցության տրամադրմամբ: 2016թ. պետբյուջեով նախատեսված հատկացումների հաշվին, նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում, դեռևս լուծման կարիք կունենա ծրագրի շահառու ճանաչված մոտ 633 ընտանիքի բնակարանային խնդիր: Դրա հետ մեկտեղ, կարգավորման կարիք կունենա Գյումրի քաղաքում ամբողջական փաստաթղթային փաթեթներ ներկայացրած, սակայն ծրագրի շահառուների ճանաչման գործընթացի ժամանակ հակապետությունից բացակայած մոտ 24 ընտանիքի բնակապահովման խնդիրը: Հովիկ Աբրահամյանը կարևորել է ընդունված որոշումը և հանձնարարել քաղաքաշինության նախարարին՝ հետամուտ լինել ծրագիրը սահմանված ժամկետում ավարտելու և որակով իրականացնելու հարցում:

Վարչապետ Հովիկ Աբրահամյանն այցելել է «ԱԶՄԴ Ֆարմայութիթի ԻնգրեդիենթսAG» ընկերություն՝ ծանոթացել վերջինիս գործունեությանն ու առաջիկա ներդրումային ծրագրերին: Նշվել է, որ այդ ծրագրերը կյանքի են կոչվելու ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության դեղագործության և բիոտեխնոլոգիաների գործողությունների ծրագրի շրջանակներում՝ Հայաստանի զարգացման հիմնադրամի հետ համագործակցությամբ:

Կոոպերացիա	Էջ 3
Մասնագետի խորհուրդը	Էջ 6
Ղայտարարություն	Էջ 7

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Արդյունավետ համագործակցություն
երկու երկրների միջև

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է Նիդերլանդների Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան պարոն Յոհաննես Դաունային: Հանդիպման նպատակն էր՝ քննարկել հայ-հոլանդական համագործակցության ընթացիկ ծրագրերն ու հետագա հեռանկարները:



Շնորհավորելով հյուրին մեր երկրում դիվանագիտական առաքելությունը սկսելու առթիվ՝ նախարարը համոզմունք է հայտնել, որ նրա պաշտոնավարման ընթացքում հայ-հոլանդական հարաբերությունները կդառնան առավել ակտիվ և արդյունավետ: «Հայաստանի և Նիդերլանդների միջև ձևավորվել են սերտ հարաբերություններ գյուղատնտեսության ոլորտի տարբեր ճյուղերում, հիմնվել են մի շարք համատեղ ձեռնարկություններ, իրականացվել են ոլորտի զարգացման ուղղված մի շարք ծրագրեր, սակայն երկրորդ համագործակցության ողջ

ներուժը դեռևս լիովին չի օգտագործվում, անհրաժեշտ է խորացնել երկկողմ հարաբերությունները՝ հաշվի առնելով Նիդերլանդների փորձը գյուղատնտեսության ոլորտում», - նշել է նախարար Սերգո Կարապետյանը:

Ընդգծելով, որ երկու երկրների միջև հաջող և արդյունավետ համագործակցություն է ձևավորվել հատկապես սերմնաբուծության, անասնապահության, ջերմոցաշինության և ձկնաբուծության ոլորտներում՝ նախարարը կարևորել է փոխգործակցությունը նաև այլ ոլորտներում: Որպես օրինակ մատնանշելով մասնավորապես թռչնաբուծության ոլորտը՝ նախարարը առաջարկել է հյուրին ուսումնասիրել համատեղ ընկերություն հիմնելու հնարավորությունը:

Կարևորելով Հայաստանում կոոպերատիվների դերն ու նշանակությունը և տեղեկացնելով, որ 2015 թվականի վերջին ընդունվել է «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքը, որով հիմքեր են ստեղծվել մեր երկրում կոոպերացիայի զարգացման համար՝ նախարար Սերգո Կարապետյանը վստահություն է հայտնել, որ Հոլանդիայի հարուստ փորձն այս խնդրում կարող է չափազանց օգտակար լինել հայկական կողմի համար:

Հանդիպման ընթացքում կողմերը պայմանավորվել են ավելի խորը ուսումնասիրել առաջիկա համագործակցության հնարավոր ուղիները և դրանց հիման վրա հետագայում մշակել համապատասխան ծրագրեր:

ԴԻՄԱՆԿԱՐ

Բարելավվել է քաղաքի տեսքը

Աշխատանք, խաղաղասեր ու լավատես է Բերդի քաղաքապետ Հարություն Մանուչարյանը: Նրա նախաձեռնությամբ և մտահղացմամբ սահմանամերձ այս տարածքում արվել է հնարավորինս՝ բնակչության սոցիալական պայմանները բարելավելու և քաղաքը բարետես դարձնելու ուղղությամբ:

Բավականին պատրաստակամ և ձեռներեց քաղաքապետը ջանադրորեն է աշխատում՝ նորոգի դարձնելով քաղաքի պատկերը: Քաղաքի բժշկական կենտրոնը հագեցվել է նորագույն սարքավորումներով, առավել որակով և դյուրին դարձնելով բնակչության սպասարկումը: Նորոգվել է նաև քաղաքի արհեստագործական ուսումնարանը՝ համալրված արհեստավարժ մասնագետներով և արդյունքում տարածաշրջանի բոլոր համայնքներից այստեղ են գալիս երեխաներ, ովքեր բարձրորակ գիտելիքներ են ստանում:

Նորոգվել է խմելու ջրի ներքին ցանցը և բարելավվել ջրամատակարարման որակը: Իրականացվում է շուրջօրյա ջրամատակարարում: Նորոգվել են նաև համայնքային նշանակության ճանապարհները: Քաղաքի մուտքից սկսած, արագած բարդիներ են տնկվել ճանապարհաեզրերին, ինչն ավելի բարետես է դարձրել քաղաքի մուտքը: Տնկիները նվիրաբերել է Արծվաբերդի անտառտնտեսությունը: Համայնքապետարանի և ՀՀ-ի միջոցներով քաղաքի մարզադպրոցում 200 մ² մակերեսով պատուհաններ են նորոգվել: Համայնքի միջոցներով բազմաբնակարան 28 շենքի բոլոր հարթակներում տեղադրվել են լույսեր: Սալիկապատվել են քաղաքի մայրթերը:

Վերանորոգման աշխատանքները շատ են կարևորվում քաղաքում. ՀՀ սոցիալական զարգացման հիմնադրամի միջոցներով նորոգվում է թիվ 2 մանկապարտեզի 3-րդ մասնաշենքը, դահլիճը, խմբասենյակը, արդյունքում հաճախող 225 երեխայի պայմանները բավականաչափ կբարելավվեն: ՀՀ-ի հետ պայմանագրով մշակույթի տանը դժվար դաստիարակվող երեխաների համար կենտրոն է ստեղծվել: Նույն ծրագրով նորոգումներ են կատարվել քաղաքային զբոսայգում, տեղադրվել են խաղահրապարակներ:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության աջակցությամբ, Բերդում կառուցվում է կենդանիների արհեստական սերմնավորման կենտրոն, ինչը կնպաստի տոհմային գլխաքանակի ավելացմանը: Արտավայրերի բարելավման ծրագրով գյուղտեխնիկայով կհամալրվի նաև քաղաքի պարկը: Նախորդ տարում Բերդի անմշակ հողերից շուրջ 50 հա դարձել է մշակելի: Տարեցտարի ավելանում են աշնանացանի ցանքատարածությունները: Նախորդ տարվա համեմատությամբ այն ավելացել է 50 հա-ով: Ցանվել է 7 հա էլիտա դասի ցորեն՝ հետագայում Բերդի ֆերմերներին հանձնելու նպատակով: Վերջին 2 տարում համայնքապետարանը 40 մլն դրամի գույքտեխնիկա է ներկրել:

Այս տարածաշրջանը գյուղատնտեսական ուղղվածություն ունի, և հողերը մշակելի դարձնելը նպատակաուղղված քաղաքականություն է: Տարեցտարի ավելի ու ավելի է գեղեցկանում Բերդ քաղաքը: Քաղաքապետ Հարություն Մանուչարյանը թեև կարևորում է աջակցությունները, օգնությունները, բայց նախապատվությունը տալիս է սեփական ուժերին և պայվելուն: Նա երբեք չի առանձնացնում մեծ և փոքր խնդիրները. ամեն մի խնդիր ունի իր դժվարությունները: Եվ գուր չէ, որ համայնքի բնակիչները գնահատում են նրա նվիրումով և ջանադիր աշխատանքը:

S. Նազիյան
Տվուշի ԳԱՄԿ

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Կանանց ձեռներեցության զարգացման
մարտահրավերները Հայաստանում

Օրերս կայացավ քննարկում՝ կանանց ձեռներեցության զարգացման ռազմավարական մոտեցման շրջանակներում՝ նվիրված ՀՀ-ում կանանց ձեռներեցության զարգացման հեռանկարներին: Քննարկման կազմակերպմանն աջակցել են Եվրոպական Միությունը, Ասիական շարժացման Բանկը և Միջազգային Ֆինանսական Կորպորացիա Համաշխարհային Բանկի կողմից:

Քննարկումը կազմակերպվել էր «Կանանց սոցիալ-տնտեսական հզորացում Հայաստանում» ծրագրի շրջանակներում, որն իրականացնում է Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիան և ֆինանսավորվում էվրոպական Միության կողմից: Բացման խոսքով հանդես եկավ Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիայի (ՀԵԿԱ) նախագահ Լիլիթ Ասատրյանը:

Քննարկման նպատակն էր՝

բաշխությունը, որին արժանացան երեք կին գործարարներ: Այն կազմակերպվում է ՀԵԿԱ-ի և ՀՀ ԿԶՑ-ի կողմից՝ 2011 թվականից: Նպատակն է՝ խթանել կանանց ձեռներեցության զարգացումը և ընդգծել կին ձեռներեցների գործունեությունը Հայաստանում: «Հիմնել եմ մասնաձեռնի կիսաֆարրիկատների արտադրամաս: Միսը, կարտոֆիլը և այլ գյուղմթերքներ մթերելու եմ տեղի ֆերմերներից, արդեն կան նախնական պայմանավորվածություններ: Արտադրամասի գործարկումով կստեղծվեք փոքրաթիվ աշխատատեղեր», - նշեց «Կին ձեռներեց դեսպան» մրցանակաբաշխությանն արժանացած անհատ ձեռներեց Թամարա Մատիսյանը (ք. Ստեփանավան): Միջոցառմանը մասնակցում էին պետական և մասնավոր կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև տեղական և միջազգային ՀԿ-եր, ֆինանսական



վերհանել կանանց ձեռներեցության զարգացման մարտահրավերները Հայաստանում, ուժեղացնել ցանցային կապը կին ձեռներեցների և տարբեր կազմակերպությունների միջև, ովքեր գործում են կանանց ձեռներեցության ոլորտում: Նպատակներից մեկն էլ՝ տարբեր կազմակերպությունների կողմից Հայաստանում իրականացված կանանց ձեռներեցության քաղաքականության (ռազմավարության) ծրագրերի մասին իրազեկվածությունը բարձրացնելն էր: Ասիական զարգացման բանկի, գենդերային մասնագետ, Կովկասյան հարցերի խորհրդատու տն. Կետևան Չիսեիձեն նշեց, որ Ասիական զարգացման բանկն աջակցում է տարբեր, այդ թվում՝ նաև ֆինանսական նախագծերին, որպեսզի հնարավորություն ընձեռվի կին գործարարներին՝ սկսել և զարգացնել իրենց բիզնեսը:

«Այսօրվա քննարկումը շատ կարևոր էր, քանի որ որոշվեցին այն ուղիները, որոնց միջոցով կարելի է լուծել գործարարության ոլորտում ծագած խնդիրները: Դրանք կներկայացվեն թե՛ պետական, և թե՛ միջազգային կազմակերպություններին, որպեսզի ներգրավվեն տարբեր ծրագրերում», - ասաց նա:

Քննարկմանը հետևեց «Կին ձեռներեց դեսպան» մրցանակա-

կառույցներ (շուրջ 80 մասնակից): Սկսած 2013թ.-ից, Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա» (ՀԵԿԱ) հասարակական կազմակերպությունը Լոռու մարզում իրականացնում է «Կանանց սոցիալ-տնտեսական հզորացում Հայաստանում» ծրագիրը: Ծրագրի գործընկերներն են՝ CISP կազմակերպությունը, Լոռու մարզպետարանը և Վանաձորի քաղաքապետարանը: Այն ֆինանսավորվում է Եվրամիության կողմից, տևողությունը 3 տարի է և կավարտվի ընթացիկ տարվա ապրիլին:

«Կանանց սոցիալ-տնտեսական հզորացում Հայաստանում» ծրագրի նպատակն է՝ խթանել Լոռու մարզի կանանց տնտեսական կարողությունների զարգացմանը՝ նպաստելով նրանց սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավմանը: «Կանանց ձեռներեցության զարգացմանն ուղղված մեր ծրագրերը կունենան շարունակական բնույթ, քանի որ ունեն շատ մեծ արդյունքներ: Բացահայտելով և հաշվի առնելով կարիքները՝ նախատեսում ենք կյանքի կոչել սոր ծրագրեր», - տեղեկացրեց ՀԵԿԱ նախագահ Լիլիթ Ասատրյանը:

Նելլի Սահակյան

ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ ՀԱՄԱՏԵՂ ԽՆԴԻՐՆԵՐ ԼՈՒԾԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ Ե ԸՆԶԵՌՈՒՄ

Գեղարքունիքի մարզի «Լանջաղբյուր համայնքի արտոսպտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվը ստեղծվել է 2012թ.-ին և անմիջապես ձեռնամուխ է եղել գյուղատնտեսության զարգացմանը նպաստող ծրագրերի իրականացմանը: Արդյունքում՝ 2013թ.-ին, արդեն ամբողջությամբ նորացվել էր գյուղատնտեսական տեխնիկան: Խորհրդային տարիներից ժառանգած բարոյապետ և ֆիզիկապես մաշված գյուղտեխնիկական փոխարինվեց նոր, ժամանակակից տեխնիկասարքավորումներով՝ տրակտորներ, խոտհնձիչներ, հակավորող սարքեր, կուլտիվատոր և այլն (ընդհանուր թվով՝ 22 միավոր տեխնիկա): Գյուղացիներն ունեն այն, ինչ հարկավոր է իրենց՝ անասնաբուծության զարգացման համար:



Կոոպերատիվն արդեն ունի 182 անդամ: «Համատեղ տեխնիկա ձեռք բերելու և ծառայություններ կատարելու հնարավորությունը միավորեց լանջաղբյուրցիներին: Նախկինում 1 հա վարի աշխատանքների համար պահանջվում էր 70 հազար դրամ: Դա պատճառ էր, որպեսզի որոշ հողատարածքներ մնային անմշակ: Այսօր արդեն, տեխնիկայի ձեռք բերումից հետո, 1 հա-ն վարում են 30 հազար դրամով: Ծառայությունների դիմաց գները նույնն են նաև կոոպերատիվի ոչ անդամների համար, սակայն աշխատանքների ակտիվ շրջանում առաջնահերթությունը տրվում է կոոպերատիվի անդամներին», - տեղեկացնում է Լանջաղբյուրի գյուղապետ Յուրիկ Բաղդասարյանը:

Տեխնիկայի բացակայության պատճառով, նախկինում դժվարությամբ էր կուտակվում անասնակերը, ինչի հետևանքով անասնազխաքանակը նվազել էր: «Մեզ մոտ կենդանիները 6-7 ամիս պահվում են գոմում: Ստիպված ենք, ապահովության համար, պահանջվածից ավելի շատ անասնակեր կուտակել, որպեսզի բավակարարի անասնազխաքանակին: Իսկ երաշտի դեպքում խոտն ստիպված գնում ենք հարևան մարզերից: Կոոպերատիվին տրամադրված խոտհնձիչները հնարավորություն են ընձեռել լիարժեքորեն լուծել կերի կուտակման խնդիրը: Եթե նախկինում 1 հա խոտը հնձվում էր 50 հազար դրամով, ապա այժմ այն՝ 20000-30000 դրամ է», - նշում է Յուրիկ Բաղդասարյանը: Կերի կուտակման դժվարությունների վերացման արդյունքում, գյուղում նկատելի է անասնազխաքանակի աճը, խոշոր եղջերավոր կենդանիների թիվը գերազանցում է 2000-ը:

Մինչև կոոպերատիվի ստեղծումը տնտեսության առաջ ծագած մի շարք դժվարությունների պատճառով, ֆերմեր Ստեփան Այվազյանը որոշել էր այլևս չզբաղվել անասնապահությամբ: Բարեբախտաբար, կոոպերատիվի ձևավորումը կայացավ ճիշտ ժամանակին: Ստեփանը ոչ միայն չի վերացրել տնտեսությունը, այլև զարգացրել է. հիմա անասնազխաքանակն արդեն հասնում է 30-ի: Այսօր ոչ միայն Ստեփան Այվազյանը, այլև Լանջաղբյուրի շատ ֆերմերներ նույնիսկ արդեն ունեն մի և կաթի իրացման խնդիր: Հիմա էլ առաջ է եկել տարածաշրջանի մի քանի գյուղերին սպասարկող սպանդանոց կառուցելու անհրաժեշտությունը: «Վերջապես կվերացվի անհիտարահիգիենիկ անբավարար պայմաններում բակային մորթը և կունենանք միջազգային չափորոշիչներին համապատասխան միս: Միայն թե սպան-

դանոցների կառուցման ծրագիրն իրականություն դառնա», - հավելում է գյուղապետը:

Ինչ վերաբերում է կաթի իրացմանը, ապա այստեղ ևս առաջ է գալիս վերամշակման արտադրամաս ունենալու անհրաժեշտությունը, քանի որ կաթի մթերման գները միշտ չէ, որ գոհացնում են գյուղացիներին: Հեռանկարային ծրագրերում, կոոպերատիվի անդամները կարևորում են նաև լեռնային ցուրտ գոտում գտնվող արտավայրերում կենդանիների համար ամառային կացարանների կառուցման անհրաժեշտությունը:

Ծրագրի ուշագրավ հաջողություններից մեկն էլ 1529 հա հեռագնա արտավայրերի ջրարբիացումն է: Տեղադրվել է 3 խմոց: Ջրապահովվածության խնդիր լուծումից հետո նկատելիորեն բարձրացել է կովերի կաթնատվությունը, ավելացել՝ քաշը: «Ձուր խմելու նպատակով կենդանիները նախկինում 5 կմ ճանապարհ էին անցնում, որպեսզի հասնեին ջրի աղբյուրին, սակայն ծրագրի իրագործման շնորհիվ, հիմա այդ խնդիրը չկա: Այժմ էլ, կենդանիների մթերատվության բարձրացման արդյունքում, կաթի և մսի իրացման խնդիր ունենք», - գոհունակությամբ փաստում է գյուղապետը: Գյուղը դեռևս ունի տեխնիկայի համալրման կարիք: Գյուղապետի կարծիքով առաջնահերթը՝ հացահատիկահավաք կոմբայնի ձեռքբերումն է: Իսկ երկար տարիներ անմշակ մնացած ու քարացած հողատարածքները կրկին վարելու և մշակության տակ դնելու համար ավելի հզոր տեխնիկա է հարկավոր, քան ունեցածը: Համայնքը պատրաստ է, համաֆինանսավորման պարագայում, կատարել իր ներդրումները:

«Գյուղատնտեսության վարման արդյունավետությունն ավելի բարձր կլինի, եթե հողատարածքները խոշոր լինեն, չլինեն կտրտված և տարբեր հատվածներում: Դա լրացուցիչ վառելիքի ծախսման պատճառ է դառնում: Կոոպերատիվի անդամներով որոշել ենք հողերը՝ ըստ հերթականության վարելու ծրագրի մշակել, որպեսզի անմիտ ծախսեր չարվեն: Այդպիսով, կբարձրանա նաև կատարվող ծառայությունների որակը, կտնտեսվի ժամանակը», - ասում է կոոպերատիվի նախագահ Նովվեթ Կարապետյանը: Նրա կարծիքով, կոոպերատիվի խնդիրներից մեկն էլ ստացված տեխնիկայի պահեստամասերի պակասն է: «Այդ նպատակով, ցանկալի է, որպեսզի հանրապետ-



ությունում ստեղծվեր կենտրոնացված վաճառքի կետ, որտեղից հնարավոր կլիներ ձեռք բերել ստացված նորագույն տեխնիկայի պահեստամասերը», - առաջարկում է կոոպերատիվի նախագահը: Ի դեպ, պրն Կարապետյանն ունի նաև իր ֆերմերային տնտեսությունը, որն ուզում է ընդլայնել: «Կոոպերատիվի ստեղծումը շատ է ոգևորել գյուղացուն, քանի որ հստակ տեսնում է պետական աջակցությունը: Գյուղում արդեն մի քանի խոշոր ֆերմերային տնտեսություններ են ձևավորվել: Անասնապահական ճյուղերի զարգացման միտումը շարունակվում է: Կոոպերատիվի մեզ այսօր համատեղ խնդիրներ լուծելու հնարավորություն է ընձեռում և մենք, մեծ սիրով, օգտվում ենք այդ հնարավորությունից», - խոսքը եզրափակում է կոոպերատիվի նախագահը:

ԱՐԶԱԿԱՆՈՒՄ ՄԻԱՎՈՐՎՈՒՄ ԵՆ ԱՐՈՏՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԸ

Վերջերս Կոտայքի մարզի Արզական գյուղում կայացած համայնքի ժողովը, միանգամայն դրական առումով, նոր խնդիր առաջադրեց գյուղական բնակչությանը: «Հ գյուղատնտեսության նախարարության ԳԾԻԳ-ի աշխատակիցների կողմից կոոպերացիայի գործունեության սկզբունքները, գործելակերպն ու առավելությունները մանրակրկիպ ներկայացվելուց հետո, արտոսպտագործողները, աշխույժ քննարկումների արդյունքում, միավորվելու, կոոպերատիվ ստեղծելու վերաբերյալ որոշում կայացրեցին:

Արզականի գյուղապետ Նորիկ Մովսիսյանի տեղեկացմամբ, գյուղում արդեն սկսվել է կոոպերացիայի ձևավորման գործընթացը: Արտոսպտագործողների



թիվն այստեղ հասնում է 130-ի, նրանցից 35-ն արդեն անդամագրվել է նորաստեղծ կոոպերատիվին: Անդամագրվողների թիվն օրեցօր ավելանում է: «Ընդհանուր առմամբ, կոոպերացիայի գաղափարախոսությունը լավ ընդունվեց արզականցիների կողմից: Տնտեսական խելամիտ հաշվարկներ կատարող ֆերմերներն անմիջապես միացան կոոպերատիվին: Ոմանց համար գուցե և որոշակի ժամանակ է պետք՝ կոնկրետ որոշում կայացնելու վերաբերյալ: Այնուամենայնիվ, գործընթացն արդեն սկսված է և պետք է շարունակություն, հաջող ընթացք և ավարտ ունենա: Մենք գիտակցաբար ենք մոտենում այդ գործի կարևորությանը, այն կարծիքին ենք, որ մեր երկրում գյուղատնտեսության զարգացման ողնաշարը պետք է լինի կոոպերացիան», - ասում է գյուղապետը:

Կոոպերատիվի առանցքային խնդիրն Արզականում արտոսպտագործման արդյունավետ կազմակերպումն է, ալպյան գոտում խոտհարքների ճիշտ օգտագործումը: Առաջիկայում կազմվելիք ծրագրում նախատեսվել են ներառել հեռագնա արտավայրեր տանող ճանապարհների նորոգումը, գյուղտեխնիկայի նորացումը (տրակտորի, խոտհնձիչի, հակավորող և այլ սարքերի ձեռքբերում), արտավայրերում, կենդանիների ջրապահովվածության խնդրի կարգավորման նպատակով՝ խմոցների տեղադրումը: «Ուզում ենք ունենալ այն ամենը, ինչը կնպաստի անասնաբուծության, հետևաբար նաև՝ կոոպերացիայի զարգացմանը: Արզականը և հարակից գյուղերն ամռան ամիսներին հյուրընկալում են մեծ թվով հովվեկների: Ուստի նրանց անարատ, ինչպես նաև օրգանիկ գյուղմթերքներով ապահովելը մեր առաջնահերթ խնդիրն է: Այդ դեպքում կաշիուժանա նաև հանգստյան տների, առողջարանների և պանսիոնատների գործունեությունը: Միաժամանակ, կզարգանա ագրոէկոտուրիզմը, ինչու չէ, նաև գյուղական զբոսաշրջությունը», - եզրահանգում է գյուղապետը: Նրա կարծիքով, արդյունքում նոր աշխատատեղեր կստեղծվեն:

«Մենք լավատես ենք և որոշակի հույսեր ենք կապում կոոպերատիվի հետ: Վերջինիս գործունեությամբ, գյուղում կբարելավվեն կյանքի պայմանները, կաշիուժանան զարգացմանը միտված ծրագրերը, որոնք կյանքի կկոչվեն: Արզականցիները, գյուղատնտեսության զարգացման արդյունքում, ֆինանսական լայն հնարավորություններ կունենան: Եվ, եթե ոչ պետության, ապա մեր ֆինանսական միջոցներով համայնքային որոշակի խնդիրներ կլուծենք: Ինչ վերաբերում է պետական աջակցությանն, ապա Արզականը միշտ էլ ունեցել է այն», - հավելում է գյուղապետը:

Էջի նյութերը՝ Նեյի Սահակյանի

ԱՆՏԱՌՆԵՏՈՒԹՅՈՒՆ

ԴԱՐՉՆԱԳՈՒՅՆ ԱՆՏԱՌ-ԱՅԻՆ ՀՈՂԵՐԻ

ՖԻԶԻԿԱԲԻՄԻԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գուգարքի անտառտնտեսության անտառները գտնվում են Հայաստանի հյուսիս-արևելյան անտառածածկի և անտառտնտեսական շրջանում: Անտառտնտեսության տարածքը գտնվում է Փոքր Կովկաս լեռնահամալարի Փամբակի լեռնաշղթայի հյուսիսային լանջերին, որի ամենաբարձր լեռնագագաթը Մայմեխն է (3100 մ):

Գուգարքի անտառտնտեսությունը, հնձորուտի անտառապետությունն ունի 1700 մ ծովից բարձրություն, հյուսիս-արևմտյան դիրքադրություն՝ 15-20° թեքություն: Անտառտնտեսության անտառները տեղաբաշխված են ծովի մակերևույթից 750-2300 մ բարձրության վրա, ընդ որում՝ մինչև 800 մ բարձրության վրա տեղաբաշխված են անտառների մինչև 0.1%-ը (12.9 հա) 801-1200 մ բարձրության վրա՝ 945.5 հա (ընդհանուր մակերեսի 4.4 %-ը), 1201-1600 մ՝ 6396 հա (29.3%-ը), 1601 և բարձր՝ 14496.6 հա (66.3 %-ը):

Անտառտնտեսության տարածքում ռելիեֆը բնութագրվում է խիստ կտրտվածությամբ և լանջերի դիրքադրության կտրուկ փոփոխականությամբ: Գերակշռում են հյուսիսային դիրքադրության լանջերը, սակայն անկախ դիրքադրությունից՝ գերակշռում են 26-30° թեքության լանջերը:

Գուգարքի անտառտնտեսության տարածքի և ընդհանրապես լեռնային ծագման հողերի կազմավորման գործընթացում կարևոր դեր են խաղում տոպոգրաֆիական պայմանները, որին համապատասխան՝ հաճախակի փոփոխվում է հողերի հիդրոլոգիական ռեժիմը: Վերջինս իր ազդեցությունն է թողնում բուսականության տեսակային կազմի, Երոզիոն գործընթացների ինտենսիվության և դրանցից կախված՝ հողակազմավորման ընթացքի տարբերության, հողերի բազմազանության բնութագրի, դրանց զարգացման և ֆիզիկական ու մեխանիկական կազմի վրա:

Անտառի տարածման ստորին գոտում (մինչև 1000 մ) տեղաբաշխված են սննդանյութերով համեմատաբար աղքատ կմախքային հողերը: Այստեղ անտառները ներկայացված են հիմնականում բոխուտ-դաժային երկրորդային համակեցություններով՝ չորասեր թփուտային տեսակների մասնակցությամբ, որոնք առաջացել են նախկինում կաղնուտների ոչնչացման պատճառով: Այստեղ Երոզիոն գործընթացը բավականին ակտիվ է ընթանում, որին նպաստում են չամակարգված մեծածավալ հատումները և լանջերի մեծ թեքությունները:

Լեռնային անտառային դարչնագույն հողերը հանդիպում են մինչև 1700 մ բարձրությունների վրա, որոնցում զարգացած են՝ բոխու, կաղնու, թխկու անտառային զանգվածները:

Գուգարքի դեկորատիվությունը հատկապես կարևորվում են սոճուտները, որոնց ծառուտները զբաղեցնում են 2435 հա: Ընդ որում, ուսումնասիրվող տարածաշրջանում են գտնվում Հայաստանում բնական ծագման սոճուտների խոշոր զանգվածները, ընդհանուր մակերեսով՝ 503 հա, որոնցից 1995 և հաջորդող տարիներին իրականացված ծավալուն ինքնակամ հատումների հետևանքով ներկայումս անտառածածկում հաշվառվել է ընդամենը 282 հեկտար, որոնց մեծ մասում ամբողջովին հասցվել է նվազագույնի:

Անտառային դարչնագույն հողերի գոտին բնորոշվում է չափավոր տաք փոփոխական խոնավ կլիմայով: Միջին տարեկան ջերմաստիճանը կազմում է

9°, օգոստոսին առավելագույն ջերմաստիճանը չի գերազանցում +37-ը, առավելագույն նվազագույնը հունվարին կազմում է -23°: 10°-ից բարձր ջերմաստիճանների գումարը կազմում է 3000° և ավելին: 10°-ից բարձր ջերմաստիճանով օրերի քանակը կազմում է 190-200 օր: Տարեկան տեղումների քանակությունը կազմում է 570 մմ: Կայուն ձյուն



նաճածկ պահպանվում է 50-60 օր: Օդի հարաբերական խոնավությունը տատանվում է 72 %-ի սահմաններում:

Անտառային դարչնագույն հողերի ֆիզիկաքիմիական հատկությունների ուսումնասիրման նպատակով հողանմուշներ են վերցվել Գուգարքի անտառտնտեսության, հնձորուտի անտառապետության 5-րդ և 6-րդ պահաբաժիններից: Հողանմուշներում որոշվել է մեխանիկական կազմը, ազրեզատային և ստրուկտուրային կազմերը, հիգրոսկոպիկ խոնավությունը, միջավայրի ռեակցիան, հումուսը և շարժուն սննդատարրերը (մատչելի ազոտ, ֆոսֆոր, կալիում):

Անտառային դարչնագույն հողերի ընդհանուր բնութագրական հատկանիշներից են՝ դարչնագույն և մուգ դարչնագույն երանգավորումը, հատկապես կազմման կառուցվածքը, գետնտիկական հորիզոնների զգալի դիֆերենցացիան:

Ըստ մեխանիկական անալիզի տվյալների՝ անտառային դարչնագույն հողերն ունեն միջակ կավավազային կազմ, ընդ որում՝ զգացվում է, որ միջին և ստորին հորիզոններում ավելի ծանր մեխանիկական կազմ ունեն, քան վերին շերտում:

Ստրուկտուրային անալիզի տվյալները ցույց են տալիս, որ հողանմուշները զգալիորեն չեն տարբերվում իրենց կառուցվածքային կազմով: Ջրակայուն ազրեզատների քանակությունը հողի վերին 0-10 սմ շերտերում տատանվում է 43.7-ից 48.5-ի սահմաններում: Տվյալները ցույց են տալիս, որ ոչ անտառածածկ տարածությունում դիտվում է կմախքային մասնիկների որոշակի աճ (3.2 %):

Անտառային դարչնագույն հողերի ռեակցիան չեզոք է, և (PH ջրային) տատանվում է 6.9-ից 7.4-ի սահմաններում:

Անտառային դարչնագույն հողերը ձևավորվում են համեմատաբար խոնավ կլիմայական պայմաններում, որտեղ օրգանական նյութերի քայքայումը ընթանում է նվազ ինտենսիվությամբ, որի հետևանքով հումուսը կուտակվում է հիմնականում վերին շերտերում: Հումուսի այդպիսի տեղաբաշխումը ըստ ամենայնի՝ պայմանավորված է նաև խոտաբուսականության տեսակային կազմով և վիճակով և դրանց բնորոշ արմատային համակարգի ձևավորմամբ: Ինչպես ցույց են տալիս անալիտիկ տվյալները, անտառային

դարչնագույն հողերը բնութագրվում են վերին գետնտիկական հորիզոններում հումուսի բարձր պարունակությամբ: Մասնավորապես հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ թեթե հումուսի պարունակությունը հողի 0-10 սմ շերտում, անտառի տակ 5-րդ պահաբաժնում կազմում է 4.0 %, իսկ 6-րդ պահաբաժնում՝ մինչև 9.8 %, ապա, ոչ անտառածածկ տարածքում այն նվազում է՝ հասնելով 3.5 %-ի (0.5-6.3 %):

Անհրաժեշտ է նշել, որ այդ տարբերակում հումուսի պարունակությունը վերին շերտում զգալի նվազում է, իսկ հումուսի պարունակությունը ստորի շերտերում նվազում է աստիճանաբար:

Արտադրական անտառային դարչնագույն հողերը բերրիության լավ ցուցանիշներ ունեն: Դրանց բերրիությունը պայմանավորված է լավ հումուսապահովածությամբ և ստրուկտուրայով, ինչպես նաև սննդատարրերի բարձր պարունակությամբ: Շարժուն ազոտի պարունակության առումով դրանք միջակ ապահովված են (0-10 սմ շերտում այն կազմում է 8.4-9.4 մգ/100գ հողում):

Շարժուն ֆոսֆորով ապահովված են անբավարար (0-10 սմ շերտում այն կազմում է 3.1-5.7 մգ/100գ հողում), իսկ կալիումով ապահովված են համեմատաբար լավ (0-10 սմ շերտում այն կազմում է 14.2-27.0 մգ/100գ հողում):

Ստացված տվյալները ցույց են տալիս, որ թե անտառկուլտուրաների, և թե մշակաբույսերի աճի և զարգացման և այդ աշխատանքների արդյունավետության բարձրացման համար ավելի առաջնային է ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի օգտագործումը:

Հարկ է նշել, որ դարչնագույն անտառային հողերը կուլտուրականացման ընթացքում կորցնելով իրենցում պարունակող հումուսի որոշ մասը՝ վերածվում են մոխրադարչնագույնի՝ հիշեցնելով շագանակագույն հողեր:

Դիտարկումների արդյունքներն ի ցույց են դնում այն հեռանկարը, որը սպասվում է անտառային հողերին անխնայ և անհաշվենկատ անտառափտումների հետևանքով, ուստի այդ աշխատանքների նախագծման և իրականացման ընթացքում պետք է, ի թիվս այլ գործոնների, խստագույնա հաշվի առնվի հողային ծածկույթի վրա դրանց ունեցած ազդեցության խնդիրները:

Գուգարքի անտառտնտեսությունում իրականացված մասնակի հողային հետազոտությունների արդյունքում կարելի է անել հետևյալ եզրակացությունները՝

Գուգարքի անտառտնտեսության, հնձորուտի անտառապետության անտառային դարչնագույն հողերն աչքի են ընկնում բարելավ մեխանիկական և ստրուկտուրային հատկություններով, օրգանական և հանքային սննդատարրերով զգալի ապահովածությամբ:

Անտառածածկ տարածքների համեմատությամբ, ոչ անտառածածկ տարածքներում արձանագրվում է հումուսի և շարժուն սննդատարրերի զգալի նվազում, ինչպես նաև հողի վերին շերտերում կմախքայնության ավելացում:

Անտառկուլտուրաների հիմնարկման և ինամբի աշխատանքներն իրականացնելիս, հնարավորության սահմաններում, անհրաժեշտ է պարարտացնել ֆոսֆորական և մասամբ՝ կալիումական պարարտանյութերով:

Ալեքս Մարկոսյան
գյուղատնտեսական գիտությունների դոկտոր
«Անտառային պետական մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ

ԾՐԱԳԻՐ
ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ



ման ծրագրի շրջանակներում կազմակերպվող Պտղատու մշակաբույսերի էտ և ձևավորում» թեմայով տեսական և գործնական դասընթացին՝ որպես ծրագրի գործողությունների մաս՝ որն ուղղված է գյուղատնտեսական լավագույն փորձի տարածմանը:

Տավուշի մարզի Նոյեմբերյանի տարածաշրջանի պտղաբույծները, ԳԱՄԿ-ի մասնագետներն ու խորհրդատուները օրերս մասնակցեցին Նոյեմբերյանում ԵՄ -ի կողմից ֆինանսավորվող և ՄԱԿ-ի Պարենի ու գյուղատնտեսության կազմակերպության կողմից իրականացվող «Տեխնիկական օժանդակություն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը՝ Եվրոպական հարևանության գյուղատնտեսության և գյուղական շրջանների զարգաց-

իսնորի կարևորությունից ելնելով՝ եռօրյա մարզային այս ուսուցումների մասնակից էր նաև ՀՀ գյուղատնտեսության փոխնախարար Գառնիկ Պետրոսյանը:

Դասընթացը վարում էին Իտալիայից ժամանած մասնագետները:

ԳԱՄԿ-ի խորհրդատուները ծանոթացան էտի և ձևավորման ժամանակակից ձևերին՝ հետագայում իրենց գիտելիքներն ի նպաստ դնելու պտղաբուծության զարգացմանը:

S. Նազիկյան
Տավուշի ԳԱՄԿ

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ԱԳՐՈՔԻՄԻԱՅԻ ԴԵՐԸ ՀՈՂԵՐԻ ԲԵՐՐԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿԱԲՈՒՅՄԵՐԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

«Ագրոքիմիական ծառայություն» ՊՈԱԿ-ը, գյուղատնտեսության նախարարության կողմից հաստատված ծրագրով, ամեն փարի մի քանի փուլերով հետազոտման է ենթարկում հանրապետության ողջ փարածքի գյուղատնտեսական մշակովի հողերը: Այդ ծրագրում յուրաքանչյուր փարի ընդգրկվում են 170 - 180 համայնքներ՝ այն կրկնելով հինգ փարին մեկ պարբերականությամբ, քանի որ բերրիության հիմնական ցուցանիշներ հանդիսացող սննդաբարձրի էական փոփոխություններ են նկատվում այդ ժամանակահատվածում, որը գիտականորեն հիմնավորված է:

Յուրաքանչյուր երեք հեկտարից, մի քանի տեղից վերցվում է մեկ խառը նմուշ, որի լաբորատոր փորձաքննությունից հետո, յուրաքանչյուր համայնքի համար կազմվում է ագրոքիմիական քարտեզ, որտեղ նշվում է յուրաքանչյուր հողակտորի ապահովվածությունը՝ ազոտ, ֆոսֆոր և կալիում սննդատարրերով: Քարտեզի հետ տրվում են նաև բնութագրեր և մշակաբույսերի պարարտացման հիմնավորված համակարգ, որի իրագործման դեպքում բարձրանում է հողի բերրիությունը և մշակաբույսերի բերքատվությունը: Առանց հանքային և օրգանական պարարտանյութերի օգտագործման, որակով և առատ բերք գրեթե անհնար է ստանալ:

Ազոտական պարարտանյութը բարձր բերքի ապահովման կարևոր սննդատարր է, սակայն, նա մեծ արդյունք է տալիս, երբ օգտագործվում է ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի հետ համատեղ: Եթե ուզում ենք մրցունակ գյուղատնտեսական մթերքներ ստանալ, պետք է հրաժարվել միակողմանի պարարտացումից:

Ազոտական պարարտանյութը թթվային ռեակցիա ունեցող պարարտանյութ է, և այն իր ազդեցությունն է թողնում հողի թթվային ռեակցիայի վրա, դրա

համար խորհուրդ է տրվում հողի հիմնական մշակման ժամանակ օգտագործել ֆոսֆորական և կալիումական պարարտանյութեր, իսկ վեգետացիայի ժամանակ սնուցման ձևով, ազոտական պարարտանյութ:



Վեգետացիայի ընթացքում յուրաքանչյուր մշակաբույս բերքի հետ միասին հողից հեռացնում է որոշակի քանակությամբ ազոտ, ֆոսֆոր և կալիում սննդատարրեր: Եթե ժամանակին այն հող չենք մտցնում, առաջանում է հավասարակշռման խախտում, որը բացասաբար է անդրադառնում հողերի բերրիության և մշակաբույսերի բերքատվության վրա:

Հանքային պարարտանյութերի համակցությունը (ազոտական, ֆոսֆորական, կալիումական) դրական ազդեցություն է ունենում բանջար-բոստանային մշակաբույսերի բերքի որակական ցուցանիշների վրա: Նրանք արագացնում են պտուղների հասունացումը, երկարաձգում վեգետացիայի ժամանակաշրջանի տևողությունը, պտուղներում ավելանում են չոր նյու-

թերի՝ շաքարի վիտամինների քանակը, պահպանման ժամանակ որակական հատկանիշները չեն կորչում: Բազմամյա տնկարկների դեպքում՝ ինչպես խաղողի, այնպես էլ պտղատու այգիների մոտ մեծանում է ցրտադիմացկունությունը:

Ֆոսֆորի պակասի դեպքում վնասվում է բույսերի անոթային համակարգը, նրա անբավարար քանակը հողում ուշացնում է նիտրատային ազոտի վերամշակումը, և բույսերում կուտակվում առողջության համար վնասակար նիտրատներ:

Կալիումի պակասի դեպքում խորը փոփոխություն է ենթարկվում բույսերի անատոմիական կազմությունը, և բույսերի մեջ կուտակվում են մեծ քանակությամբ չվերամշակված ամիակ: Վերջին 15 - 20 տարիներին, հայտնի պատճառներով, հանրապետություն ֆոսֆորական և կալիումական պարարտանյութեր համարյա չեն ներկրվել, միայն սահմանափակ քանակով ազոտական պարարտանյութ էր ներկրվում:

Մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հողերի ապահովվածությունը ազոտ, ֆոսֆոր և կալիում սննդատարրերով զգալիորեն նվազել է, որը բացասաբար է անդրադարձել նաև մշակաբույսերի բերքատվության վրա: Սակայն, 2014 թվականից կառավարության կողմից սուբսիդավորվում են ոչ միայն ազոտական, այլ նաև ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերը և մատչելի գներով տրվում բոլոր հողօգտագործողներին: Մեր վերջին ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դանդաղ, բայց դրական տեղաշարժ է նկատվում՝ ինչպես հողերի պարարտանյութերով ապահովվածության, այնպես էլ՝ բերքատվության աճի նկատմամբ:

Բոլոր հողօգտագործողներին խորհուրդ ենք տալիս, ցանկացած մշակաբույսի մշակության դեպքում, օգտագործել համալիր (ազոտ, ֆոսֆոր, կալիում) պարարտացում, խստիվ պահպանելով օգտագործման ժամկետները և ծախսի նորմաները: Բերքի հասունացումից 20-25 օր առաջ դադարեցնել բոլոր տեսակի քիմիական մշակումները:

Վաչագան Դավթյան

«Ագրոքիմիական ծառայություն» ՊՈԱԿ-ի տնօրեն

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ՝ ԳՈՍԱՂԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԵՂԱՆԱԿ

Գոմաղբից և թռչնաղբից պատրաստված օրգանական պարարտանյութը բարձրացնում է հողի բերրիությունն ու լավացնում մեխանիկական կազմը, միաժամանակ ավելացնում է հումուսի պարունակությունը: Այդ ամենով հանդերձ, բարձրացնում է մշակաբույսերի բերքատվությունը:

Այն կարևոր դեր է խաղում բնության մեջ նյութերի շրջապտույտում, քանի որ գոմաղբի հետ հող են վերադառնում նշանակալի քանակությամբ օրգանական նյութեր և հանքային միացություններ: Գոմաղբը պարունակում է բույսերի համար համարյա բոլոր անհրաժեշտ սննդարար նյութերը և առաջին հերթին՝ ազոտ, ֆոսֆոր, կալիում, մագնեզիում, երկաթ, ինչպես նաև միկրոտարրեր՝ բոր, մոլիբդեն, կոբալտ, մարգանեց, պղինձ և այլն:

Օրգանական պարարտանյութի հետ հողի մեջ են թափանցում հսկայական քանակությամբ դաշտային միկրոօրգանիզմներ, որոնք նշանակալի մեծացնում են հողի միկրոկենսաբանական գործունեությունը: Գոմաղբը ածխաթթվի (CO₂) աղբյուրներից մեկն

է, որն անհրաժեշտ է ուժեղացնելու տերևների օդային սնուցումն ու օրգանական նյութերի սինթեզը:

Ներկայումս հանրապետության ոչ մի անասնապահական տնտեսութ-



յունում օրգանական թափոնները, հատկապես՝ գոմաղբն ու թռչնաղբը, առաջադեմ եղանակով չեն մշակում, և գոմաղբը՝ որպես հումք օրգանական պարարտանյութերի պատրաստման համար ևս արդյունավետ չի օգտագործվում:

Նախկինում ագրոքիմիկոսներն առաջարկում էին ցամաքային գոմաղբը կուտակել բետոնապատված գոմաղբամբարներում: Այնտեղ պահել մոտ 6 ամիս և ֆերմենտացվելուց հետո օգտագործել՝ որպես օրգանական պարարտանյութ:

Գոմաղբամբարում պահելու ըն-

թացքում, աերացիայի պրոցեսում, ոչնչանում են մոլախոտերի սերմերն ու հիվանդության հարուցիչները, իջնում է թթվայնությունը, հեռանում են ավելորդ գազերը, և գոմաղբը վերածվում է օրգանական պարարտանյութի: Սակայն, այդ եղանակն ունի մի շարք թերություններ և ներկայումս այն հնացած տեխնոլոգիա է համարվում:

Գոմաղբամբարում ֆերմենտացման պրոցեսը երկարատև է՝ 6-14 ամիս: Այդ ընթացքում գոմաղբից անջատված գազերի գարշահոտությունները տարածվում են շրջակա միջավայր և աղտոտում

բնությունն ու մոտակա բնակավայրը:

Պատրաստված օրգանական պարարտանյութի որակը ցածր է ստացվում, որովհետև ամեն օր անասնաշենքից հավաքված թարմ գոմաղբը լցվում է ֆերմենտացվող գոմաղբի մեջ՝ և խախտելով ընթացող պրոցեսը:

Գոմաղբի մշակման ընթացքում, Էկոլոգիական խնդիրները հաջողությամբ լուծելու և որակյալ օրգանական պարարտանյութեր ստանալու համար, անհրաժեշտ է օգտագործել գոմաղբի աերոբ արագացված ֆերմենտացման եղանակը: Մշակման տևողությունը 7-10 օր է և ստացվում է լիարժեք օրգա-

նական պարարտանյութ: Այդ պրոցեսի ժամանակ օրգանական թափոնները տաքանում են 60-70°C ջերմաստիճան, որը սպանիչ ազդեցություն է թողնում ճանճերի թրթուրների և հարսնյակների, հելմինտների ձվերի և հիվանդաբեր միկրոօրգանիզմների վրա:

Կոմպոստավորման տեխնոլոգիան նախատեսում է նախօրոք գոմաղբի հետ խառնել լավ ջրակլանիչ լցանյութ՝ տորֆ, ծղոտ, թեփ և այլն՝ այն հաշվով, որպեսզի խառնուրդի խոնավությունը լինի 70%-ից ավելի, ածխածնի հարաբերությունն ազոտի նկատմամբ՝ 20:1-30:1 սահմաններում, իսկ pH = 6 - 8:

Գոմաղբը կոմպոստավորում են ֆերմային կից բաց հրապարակում և ստացիոնար մեքենայացված արտադրամասերում մոբիլային կամ ստացիոնար միջոցներով: Տարվա տաք շրջանում կոմպոստի պատրաստումը կարելի է կատարել հատուկ նախապատրաստված դաշտային հրապարակներում:

Օրգանական կոմպոստը պարունակում է. ընդհանուր ազոտ՝ 1,31 %, ֆոսֆոր՝ 0,83, կալցիում՝ 0,7 %: Այն հաջողությամբ կարելի է օգտագործել ցանկացած տեսակի հողերում:

Գոմաղբի աերոբ արագացված ֆերմենտացման և օրգանական կոմպոստների պատրաստման տեխնոլոգիան մշակվել է վերջին տասնամյակներում և առանձնապես լայն տարածում է ստացել:

Շարունակությունը՝ հաջորդ համարում

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԳԸ

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՄԵՂՎԱՆՈՑՈՒՄ

Մինչև մեղուներին ձմեռանոցից դուրս բերելը, հարկավոր է նախապատրաստել մեղվանոցի տեղը: Այն ընտրում են անասնագուներից հեռու, որը պետք է լինի ցանկապատված և քամիներից պաշտպանված, լավ է, երբ մեղվանոցը պաշտպանված է դեկորատիվ ծառերով, թփերով: Վերջիններս կարևոր նշանակություն ունեն մեղուների կողմնորոշման համար:

Բացի այդ, դեկորատիվ բույսերի ծաղիկները վաղ գարնանը սպիտակուցային (ծաղկափոշի) և ածխաջրային (նեկտար) կերի լրացուցիչ աղբյուր կարող են հանդիսանալ, իսկ ամռանը՝ պաշտպանել մեղվանոցը արևի կիզիչ ճառագայթներից:

Եթե ձմեռանոցային շենքում ձմեռում են մի քանի մեղվանոցների մեղվաընտանիքներ, նպատակահարմար է՝ ձմեռանոցից դուրս բերելուց հետո, համապատասխան տրանսպորտային մի-



ջոցներով փոխադրել գարնանային մեղրաբերքի: Այդպես են վարվում նախալեռնային և լեռնային շրջաններում ձմեռող մեղվանոցների հետ: Արարատյան դաշտ տեղափոխելուց ապահովվում է պտղատու այգիների մեղվափոշոտումը և մեղվաընտանիքների արագ զարգացումը:

Մեղվանոցում վաղ գարնանային աշխատանքների հիմնական նպատակն է՝ վերացնել մեղուների՝ ձմռան ընթացքում մեղվափեթակում առաջացած անցանկալի երևույթները, նպաստավոր պայմաններ ստեղծել մեղվանոցում ուժեղ մեղվաընտանիքների աճեցման համար, ձեռնարկել բոլոր միջոցառումները, որպեսզի արդյունավետ օգտագործվի գլխավոր մեղրաբերքը:

Ցածրադիր շրջաններում՝ փետրվարի վերջերին, նախալեռնայինում՝ մարտի առաջին տասնօրյակում, լեռնայինում՝ մարտի վերջերին ավելի հաճախ պետք է հետևել ձմեռող մեղվաընտանիքների վարքագծին: Եթե ձմեռանոցում մեղուներն անհանգիստ են և աղմկում են, անհրաժեշտ է նրանց դուրս դնել նույնիսկ այն դեպքում, երբ եղանակային պայմանները նպաստավոր չեն մեղուների մաքրման թոփաքի համար:

Սովորաբար այդպիսի երևույթ նկատվում է ոչ բոլոր մեղվաընտանիքների մոտ: Այդ դեպքում դուրս են դնում միայն աղմկող մեղվաընտանիքները և պարզում պատճառը: Դա կարող է լի-

նել փեթակի թույլ օդափոխության, մայր մեղվի բացակայության, կերապաշարի վերջանալու, փեթակ մուտք գործած մկան և այլնի պատճառով: Այդպիսի մեղվաընտանիքներին պետք է անհրաժեշտ օգնություն ցույց տալ:

Մեղվաընտանիքները ձմեռանոցից հարկադրված դուրս դնելու ժամանակ նրանց տեղը մաքրում են և ծղոտ փռում:

Մեղուների ձմեռանոցից դուրս դնելու ամենանպաստավոր ժամանակն է, երբ դրսում քամի չկա, պարզ, արևոտ օր է, սովորում օդի ջերմաստիճանը 12 °C-ից ցածր չէ, իսկ եղանակը բավականին կայունացել է: Մեղուները ձմեռանոցից դուրս են բերում վաղ առավոտյան, այն հաշվով, որ ժամը 10-12-ը աշխատանքներն ավարտվեն: Մեղվաընտանիքները տեղադրում են գետնից 25 սմ բարձր՝ պատվանդանների վրա, առջևի մասը՝ քիչ թեթևությամբ, որը հեշտացնում է մեղուների աշխատանքը փեթակի ներսից զանազան թափոններ հեռացնելիս, և տեղումներն ներս չեն թափանցում:

Շատ կարևոր է, որ մեղվանոցում լինի հոսող ջրով ջրաման, որպեսզի մեղուները հենց սկզբից սովորեն ջուր վերցնել այդտեղից, հակառակ դեպքում նրանք ջրի պահանջը հագեցնելու համար մեղվանոցից շատ հեռու են թռչում, ծախսում հսկայական էներգիա, ենթարկվում զանազան պատահարների ու ոչնչանում: Հաճախ նրանք օգտվում են կեղտաջրերից, որոնք հիվանդությունների առաջացման աղբյուր են: Նպատակահարմար է մեղվանոցում օգտագործել երկու ջրաման, որից մեկի մեջ լցված լինի աղաջուր (1 գ աղ՝ 1 դույլ ջրին):

Մեղվանոցների փեթակների արկանոցները հարկավոր է բացել առջևի շարքից: Թոփաքի ժամանակ, մեղվաբույժը ուշադիր պետք է հետևի բոլոր մեղվաընտանիքների թոփաքի ընթացքին: Եթե ընտանիքն աշնանից լավ է նախապատրաստված եղել ձմեռմանը, և մեղուների ձմեռումն ընթացել է բարեհաջող, ապա մաքրման թոփաքը կատարվում է բավական ակտիվ և արագ: Եթե առանձին ընտանիքներ վատ են մաքրման թոփաք կատարում, առաջնահերթ դրանց բներն ստուգում են, արդյոք արկանոցը ծածկված չէ սատկած մեղուներով, կան լուծի նշաններ, ընտանիքը կերապաշար ունի, թե ոչ:

Պարզելով մաքրման թոփաք չկատարելու պատճառը՝ մեղվաընտանիքին անհրաժեշտ օգնություն են ցույց տալիս:

Մեղվաընտանիքները ձմեռանոցից դուրս դնելուց հետո, առաջին հերթին, պետք է ապահովել կերով (եթե դրա քանակը քիչ է), այնուհետև խնամքով տաքացնել բույնը, խոնավացած վերին և կողային տաքացման բարձերը փոխարի-



Մեղվաընտանիքների գարնանային ստուգումները

նել չորերով: Բոլոր ընտանիքները պետք է ապահովված լինեն մայրերով:

ՄԵՂՎԱՆՈՑԱՆԻՔՆԵՐԻ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ

Ստուգման ժամանակ որոշվում է ընտանիքի ուժը, մայր մեղվի առկայությունը, ծվերով, թրթուրներով և հարսնյակներով մեղրահացերի, դատարկ մեղրահացերի, մեղրապաշարի քանակը: Մեղվանոցի ստուգումը չպետք է հետաձգել, այն հարկավոր է կատարել մաքրման թոփաքից անմիջապես հետո՝ օրվա տաք, բարենպաստ եղանակին:

Եթե մեղվապահն ուզում է փոխել փեթակը, ապա այդ փեթակի տեղը դնում է ախտահանված դատարկը, և մեղվաընտանիքը տեղափոխում է դրա մեջ: Ազատված մեղվափեթակն անմիջապես մաքրում, ախտահանում են, օգտագործում հաջորդ ընտանիքը տեղափոխելու համար: Պետք է ձգտել, որ նոր փեթակն իր արտաքին տեսքով (գույնով, թոփաքատախտակով, կափարիչով, արկանոցի փակիչով) նման լինի նախորդին:

Ստուգման ժամանակ թերություններ հայտնաբերելիս, անմիջապես ուղղում են, ստուգման արդյունքները գրանցում մեղվանոցի մատյանում: Եթե պաշարի պակաս է հայտնաբերվում, այն լրացվում է պահեստավորված մեղրահացային մեղրով կամ գրի առնվում հետագայում շաքարաջրով լրացնելու համար: Հարկավոր է իմանալ, որ եթե 435 x 300 մմ չափի մեղրահացը լիքը լցված է մեղրով, ապա այն պարունակում է 3.54 կգ մեղր, իսկ բազմահարկ փեթակների շրջանակի մեղրահացը՝ 2.53 կգ մեղր:

Վաղ գարնանը, եթե մեղրապաշար չկա, մեղվաընտանիքներին կերակրում են շաքարի փոշուց և մեղրից պատրաստված շաքարամեղրաբլիթով: չորս մաս շաքարի փոշուն ավելացնում են 1 մաս նախօրոք՝ մինչև 45-50 °C տաքացրած մեղր: Յուրաքանչյուր 1 կգ մեղրին ավելացնում են 100-130 գ ջուր: Պատրաստի բլիթը՝ մինչև 0,5 կգ քաշով, կախված մեղվաընտանիքի ուժից, տեղավորում են մեղուներով պատված մեղրահացերի վրա: Լավ արդյունք է տալիս, երբ վաղ գարնանը շաքարամեղրաբլիթն ավելացնում են ծաղկափոշի, իսկ կանխարգելիչ նպատակով՝ նոզեմացիդ, նոզետոմ կամ նոզեմատ դեղամիջոցը, որն օգտագործվում է մեղուների նոզեմատոզ հիվանդության դեմ:



Եթե մեղվանոցում օգտագործվում են բազմահարկ փեթակներ, որոնք ձմեռել են երկու հարկով, գարնանը մեղուները զբաղեցրած են լինում երկրորդ հարկը, առաջինը հիմնականում դատարկ է լինում: Երկրորդ հարկը մեղուներով տեղադրում են մեկ այլ, մաքրված, ախտահանված հատակի վրա, իսկ առաջինը տեղափոխում են պահեստ, աղտոտված



Մեղուների գարնանային կերակրումը մեղրով, նախորդ տարվա ծաղկափոշով



Մեղուների կերակրումը օշարակով

հատակը մաքրում, ախտահանում և օգտագործում հաջորդ փեթակի համար: Եթե մեղուները, բացի երկրորդ հարկից, զբաղեցնում են ներքևի (առաջին) հարկի կեսը կամ 1/3ը, ապա փեթակը թողնում են այդ վիճակում (երկու հարկով), մաքրում են միայն հատակը:

Ձմեռման ընթացքում մեղվաընտանիքների որոշ մասը՝ անորակ կերապաշարի, խոնավության, բորբոսի, լուծի, կրծողների և ուրիշ պատճառներով կարող է տուժել, թուլանալ: Այդպիսի փեթակներում կարող են լինել նաև մայրերի կորուստ, հետևաբար նրանց պետք է համապատասխան օգնություն ցուցաբերել: Գարնանը անհրաժեշտ է բուժել վարատոզի, հաճախ նոզեմատոզի, հարկ եղած դեպքում փոխախտի, իսկ եթե առկա է սնկային հիվանդություն, ապա մի փոքր ուշ՝ նաև դրա դեմ:

Շարունակությունը՝ հաջորդ համարում

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» II Ծրագիր Արժեշտների Զարգացման II-րդ փուլի մրցույթ

ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից իրականացվում է «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» II Ծրագիրը, որի բաղադրիչներից է «Արժեշտների զարգացումը» (ԱՇՀ): Արժեշտների զարգացմանն ուղղված ենթածրագրերն իրականացվում են Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում: Ենթածրագրերի ընտրությունը կատարվում է մրցույթային կարգով՝ համաձայն գործող ընթացակարգի:

ԱՇՀ Բաղադրիչի նպատակը.

ԱՇՀ բաղադրիչի հիմնական նպատակն է՝ աջակցություն ցուցաբերել կաթի, մրգի, բանջարեղենի, բարձրարժեք հատապտուղի և մեղրի ոլորտների արտադրողներին, վերամշակողներին և արժեշտային այլ մասնակիցներին արտադրանքի որակական ցուցանիշների, ներքին շուկայի պահանջարկի, սննդամթերքի անվտանգության պահանջների բարելավման, ինչպես նաև գյուղատնտեսական մթերքի արտահանման ծավալների ավելացման հարցերում:

Իրավասու հայտարարներ

Բաղադրիչի շրջանակներում, նախատեսվում է նպատակային ֆինանսական օժանդակություն տրամադրել ՀՀ օրենսդրությանը համապատասխան և պատշաճ ձևով գրանցված գյուղատնտեսության ոլորտում տնտեսվարող սուբյեկտներին, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերին, արտադրական և սպառողական կոոպերատիվներին, գյուղատնտեսական մթերքի և սննդի վերամշակման ձեռնարկություններին (բացառությամբ հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների), որոնք ներգրավված են ընտրված արժեշտների մեջ և բավարարում են ծրագրի համապատասխանության և ընտրության չափանիշներին:

Իրավասու հայտատուներից (վերամշակող ձեռնարկություններ և այլն) առաջնահերթություն կստանան այն հայտատուները, որոնք ենթածրագրերի իրականացման ընթացքում լայնածավալ համագործակցություն (պայմանագրային հիմունքներով) կնախատեսեն մեծ թվով ֆերմերային տնտեսությունների հետ:

Նպատակային ֆինանսավորման ուղղությունները.

ԱՇՀ Բաղադրիչի շրջանակներում շահառուներին հատկացվող նպատակային ֆինանսավորման գումարները կարող են օգտագործվել ստորև նշված ծախսերի լրիվ, կամ մասնակի ֆինանսավորման նպատակով.

1. Նոր սարքավորումների, վերամշակման սարքավորումների, ինչպես նաև գրակիրների ձեռքբերում, այդ թվում՝
 - ✓ արտադրության և վերամշակման սարքավորումներ,
 - ✓ հետբերքահավաքային մշակման և վերամշակման,
 - ✓ պահեստավորման և պահպանման,
 - ✓ լաբորատոր (ներառյալ՝ շարժական և հատուկ մասնագիտացած տեխնիկա և սարքավորումներ),
 - ✓ փաթեթավորման և տեսակավորման,
 - ✓ որակի վերահսկողության,
 - ✓ բոլոր տիպի սարքավորումներ և տեխնիկական հոսքագծեր՝ կապված

արտադրանքի որակի բարելավման և ծավալների ավելացման հետ:

2. Տեխնոլոգիական վերազինման սարքավորումներ,

3. «ԱՄԿ» Սննդի անվտանգության կառավարման համակարգի իրականացման ծախսեր՝ ներառյալ իրականացման ընթացակարգերի բոլոր փուլերը (ուսուցումներ, հեղուկալ համակարգերի ներդրումը՝ HACCP, ISO, օրգանական արտադրության, պայշաճ գործելակերպի բոլոր փուլերը, հարակից այլ տեխնիկական աջակցություն և այլն),

4. Տեղական և միջազգային հավաստագրերի ձեռքբերման և միջազգային կազմակերպությունների կողմից հավաստագրման ծախսեր

5. Շուկայավարման և բրենդինգի ծառայությունների ձեռքբերման ծախսեր, ներառյալ՝ առևտրային նշանի և արտադրանքի արտաքին տեսքի (նաև փաթեթավորման, մշակման և այլն),

6. Բոլոր տեսակի բարձրարժեք մրգերի և հատապտուղների նոր տարբերի տեսակների ձեռքբերման ծախսեր,

7. Տեխնիկական աջակցության և մասնագիտական տեխնիկական և շուկայավարման (հատկապես արտահանման խթանման վերաբերյալ) խորհրդարկության ձեռքբերման ծախսեր:

Վերոնշյալ ակտիվների ձեռքբերումը կարելի է ֆինանսավորել ինչպես ԱՇՀ Բաղադրիչի նպատակային ֆինանսավորման, այնպես էլ շահառուների համաֆինանսավորման հաշվին:

ԱՇՀ բաղադրիչի շրջանակներում չեն կարող ֆինանսավորվել՝

- նախքան դրամաշնորհային համաձայնագրի կնքումը որևէ ձեռքբերման ծախս,
- բնապահպանական առումով վտանգավոր և շրջակա միջավայրի վրա անվերականգնելի բացասական ազդեցություն ունեցող ակտիվների ձեռքբերման ծախսեր,
- բացասական սոցիալական ազդեցություն ունեցող, կամ տարաբնակեցման ռիսկեր պարունակող ակտիվների ձեռքբերման ծախսեր,

1. շինությունների և հողատարածքների ձեռքբերման և վարձակալության ծախսեր,

2. շինարարական աշխատանքների իրականացման ծախսեր: Եթե անհրաժեշտ է իրականացնել վերանորոգման որոշակի աշխատանքներ, կապված սննդի անվտանգության համակարգերի ներդրման հետ, ապա դրանք կարող են ֆինանսավորվել շահառուների կողմից կատարվող ենթածրագրի համաֆինանսավորման միջոցներով,

3. հումքի և շրջանառու միջոցների ձեռքբերման ծախսեր,

4. աշխատանքի վարձատրության և փոխհատուցման ծախսեր,

5. շահառուի գործառնական ծախսերը, որոնք հակասում են ԱՇՀ Բաղադրիչի դրույթներին,

6. սարքավորումների վերանորոգման ծախսեր,

Վերջին ցանկի կետերից (1-6) յուրաքանչյուրի մասով շահառուի սեփական ֆինանսական ռեսուրսներից կատարած ծախսերը համարվում են շահառուների համաֆինանսավորում և դիտվում են նրա կողմից ենթածրագրի բյուջեում ներդրման ենթակա 50%-ի համարում:

Ներկայացվող պահանջներ

Հայտատուի կողմից ներկայացվող

Հայտ-դիմումները և Բիզնես-հայտերը պետք է բավարարեն հետևյալ պահանջներին՝

• առաջարկվող ենթածրագրի տևողությունը պետք է լինի նվազագույնը՝ 12 (ամիս), իսկ առավելագույնը՝ 24 (ամիս):

• Ենթածրագրի նպատակային ֆինանսավորման գումարը պետք է լինի նվազագույնը 8.000 ԱՄՆ դոլար, իսկ առավելագույնը՝ 50.000 ԱՄՆ դոլար:

• ԱՇՀ Բաղադրիչի շրջանակներում նախատեսվում է իրականացնել ենթածրագրերի համաֆինանսավորում շահառուի կողմից՝ ենթածրագրի իրականացման բյուջեի առնվազն 50%-ի չափով:

• Շահառուների կողմից ենթածրագրերը պետք է համաֆինանսավորվեն ֆինանսական միջոցներով. ոչ ֆինանսական ակտիվների (հող, անշարժ և շարժական գույք, սարքավորումներ, աշխատանք և այլն) ներդրումը ԱՇՀ Բաղադրիչի կողմից չի համարվում համաֆինանսավորում: Համաֆինանսավորում է համարվում շահառուի կողմից իրականացվող բացառապես ֆինանսական ներդրումը:

• Ձեռնարկության սննդամթերքի անվտանգության վերաբերյալ լրացված հարցաթերթիկ:

• Հայտատուն չի կարող մեկ անգամից ավել ստանալ ենթածրագրերի նպատակային ֆինանսավորում:

• Ենթածրագրերի նպատակային ֆինանսավորում չի հատկացվում այն հայտատուներին, ովքեր նախկինում անհաջողության են մատնել, կամ ձախողել են որևէ ծրագիր:

Հայտ-Դիմումների ընդունում

Շահագրգիռ հավակնորդներն (դիմորդները) իրենց կողմից պատրաստված Հայտ-Դիմումները և պահանջվող փաստաթղթերը պետք է ներկայացնեն ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական Ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի ԱՇՀ քարտուղարություն (ՀՀ ք. Երևան, Կոմիտաս 54 ք.), մինչև 25.04.2016թ. ժամը 18:00:

Հայտ-Դիմումները պատրաստում և ներկայացնում են հավակնորդ մասնակիցները՝ իրենց ղեկավարի ստորագրությամբ: Վերջնաժամկետից հետո ներկայացված Հայտ-Դիմումները ենթակա չեն ընդունման ԱՇՀ քարտուղարության կողմից: Էլեկտրոնային փոստով և ֆաքսով ուղարկված Հայտ-Դիմումները ենթակա չեն ընդունման:

Ծանուցում

Ինչպես ընտրված, այնպես էլ մերժված հայտատուները կտեղեկացվեն գրավոր: Մերժված հայտատուներին կվերադարձվեն իրենց կողմից ներկայացված փաստաթղթերի բնօրինակները:

ԱՇՀ բաղադրիչի գործունեության և հայտերի պատրաստման կանոնակարգերին մանրամասն ծանոթացնելու նպատակով ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական Ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի ԱՇՀ քարտուղարության աշխատակազմը պոստեցիալ հավակնորդների համար կկազմակերպի աշխատաժողով՝ կաթի, մրգի, բանջարեղենի, բարձրարժեք հատապտուղի և մեղրի ոլորտների արտադրողների, վերամշակողների և արժեշտային այլ մասնակիցների համար, 22.04.2016թ., ժամը 12:00

հասցե ՀՀ ք. Երևան, Արգիշտիի փող. 7 շենք «Մոսկովյան մշակութազործարարական կենտրոն», «Դոմ Մոսկվի» Երևանում:

Փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ տեղեկություններ.

Հայտ-Դիմումների պաշտոնական ձևանմուշների լրացման հետ կապված այլ անհրաժեշտ տեղեկություններ կարող եք անվճար ստանալ ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական Ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ից

Էլեկտրոնային փոստ - info@arspiu.com
Համացանցի կայքէջ - www.arspiu.com,
Հեռախոս 29-73-01; 29-73-02; 29-73-03



Աշխատանքի արժեքավորության շնորհիվ

ՀԱԱՀ Ազրոբիզնեսի ուսուցման կենտրոնի մագիստրատուրայի երկրորդ կուրսի ուսանողուհի Մերի Մելքոնյանը, որը ներկայացնում էր Հայաստանի ազգային ազրաբային համալսարանը, ՌԴ-ում մարտի 14-17-ին կայացած միջազգային գիտագործնական խորհրդածողովի ժամանակ առաջին կարգի դիպլոմի արժանացավ՝ «ՀՀ Արմավիրի մարզում խաղողի արտադրության ոլորտում բերքի ինդեքսային ապահովագրություն» թեմայով իր զեկուցման համար:

Խորհրդածողովը նվիրված էր Ռուսաստանի պետական ազրաբային համալսարանի Կ.Ա. Տիմիրյազևի անվան Մոսկվայի գյուղատնտեսական ակադեմիայի առաջին տնօրեն Ն.Ի. Ժելեզնովի 200-ամյակին: Խորհրդածողովին մասնակցում էին Ռուսաստանի և արտերկրի ավելի քան 20 բուհերի ուսանողներ և Ռուսաստանի պետական ազրաբային համալսարանի շուրջ 200 ուսանողներ:

Խորհրդածողովի շրջանակում «Տիմիրյազևկայի» 15 ֆակուլտետներում անցկացվեցին լուսմեր՝ ըստ առանձին մասնագիտական ուղղությունների: Մերի Մելքոնյանը ներկայացրեց «Տնտեսագիտություն և ֆինանսներ» ֆակուլտետում անցկացվող «Ազրոբային նախագիտական համալիրի ֆինանսական կառավարման ժամանակակից միտումները» թեմայով նիստին: Նրա զեկուցից նպատակն էր՝ գնահատել ՀՀ Արմավիրի մարզում խաղողի արտադրության ոլորտում բերքի ինդեքսային ապահովագրության կիրառության դեպքում ֆերմերների վճարելիք ապահովագրավորների չափը՝ հաշվի առնելով պետության կողմից առաջարկվող աջակցության ծրագրերը: Առաջին կարգի դիպլոմը ստացավ գիտական և վերլուծական տեսանկյունից աշխատանքի արժեքավորության շնորհիվ:

Սուս Ավետիսյան

Ազրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն (ICARE) հիմնադրամ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



«Սյունիք-Ջարգացում» ՀԿ-ի կողմից իրականացվող Համայնքային Ջարգացման ծրագրի շրջանակներում, Վայոց ձորի մարզի Գեղափ համայնքում գործող տնկարանային տնկարաններում մարտի 15-ին կատարվել է բարձրորակ պարզադուր ֆոսֆորային պարզադուր (ընկույզ, փանձ, խնձոր, ծիրան, սերկևիլ, դեղձ, սալոր, բալ, կեռաս):

Վերապարաստված մասնագետների կողմից գնորդներին տրամադրվում է նաև այգու մշակության վերաբերյալ տեղեկատվական նյութեր և խորհրդատվություն:

Դիմել Արամ Հակոբյանին:

Հեռ.՝ 093-46-21-93:

ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

Շինարարական աշխատանքներ: Մրցույթի ծածկագիր՝ CARD/ ADA AHM16/01 15 ապրիլ, 2016թ.

«Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամը (CARD), Ավստրիական Ջարգացման Գործակալության (ADA) կողմից ֆինանսավորվող «Կենդանիների առողջության կառավարում» (AHM) ծրագրի իրականացման շրջանակում, հայտարարում է մրցույթ՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, գ. Նոր Գյուղ, 5-րդ փողոցի թիվ 20 հողամաս հասցեում գտնվող, «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամին սեփականության իրավունքով պատկանող հողատարածքում կատարելու շինարարական աշխատանքներ հողերի գեներիկական կենտրոն կառուցելու համար (CARD / ADA AHM /16/01):

«Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամը (CARD) հրավիրում է բոլոր իրավասու շինարարական կազմակերպություններին մասնակցելու՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գյուղ համայնքում կատարելու շինարարական աշխատանքներ՝ հողերի գեներիկական կենտրոն կառուցելու (CARD / ADA AHM /16/01) մրցույթին:

Մրցույթին կարող են մասնակցել միայն այն կազմակերպությունները, որոնց վերջին 2 տարվա շինարարական աշխատանքների ընդհանուր գումարը ոչ պակաս է, քան՝ 100.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

Մրցութային փաթեթները կարելի է ձեռք բերել CARD-ի ներկայիս գրասենյակից՝ մինչև 2016թ ապրիլի 23-ը, ժամը 16:00, հետևյալ հասցեով՝ ՀՀ ք. Երևան, Ազատության 1/21-40, հեռ.՝ 374 60 440 550:

Շահագրգիռ կազմակերպությունները, մրցութային փաթեթները ստանալու համար, պետք է ներկայացնեն շինարարական աշխատանքների կատարման համապատասխան արտոնագրերի պատճենները և պետեզիստում գրանցման վկայականի պատճեն:

Հայտերը պետք է ուժի մեջ մնան բացման օրվանից՝ 60 օրվա ընթացքում և ներկայացվեն կնքված փակ ծրարների մեջ՝ մինչև 2016թ. ապրիլի 29-ը, ժամը 12:00, հետևյալ հասցեով՝ ՀՀ ք. Երևան, Ազատության 1/21-40, Հեռ.՝ 374 60 440 550:

Նշված ժամկետից հետո ստացված հայտերը չեն մասնակցելու հայտերի բացմանը, որը տեղի կունենա 2016 թ. ապրիլի 29-ին, ժամը 16:00-ին՝ «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» (CARD) հիմնադրամի գրասենյակում՝ մասնակցելու ցանկություն հայտնած հայտատուների ներկայությամբ:

Հարգելի քաղաքացիներ,

Տեղեկացնում ենք, որ Գյուղատնտեսական հանրագիտարան ձեռք բերելու համար կարող եք զանգահարել 011 23 14 30 հեռախոսահամարով:



Հանրագիտարաններն առկա են նաև Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններում, ինչպես նաև՝ «Նոյան Տասպան» և «Բուկինիար» գրատներում:

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է 2016 Թ. ԲԱԺԱՆՈՐԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

«ԱԳՐՈՂՐԱՏՈՒ» թերթ	«ԱԳՐՈՂԻՏՈՒԹՅՈՒՆ» ամսագիր
1 համարի գինը՝ 120 դրամ	1 համարի գինը՝ 1350 դրամ
6 ամսվանը՝ 1980 դրամ	6 ամսվանը՝ 4050 դրամ
1 տարվանը՝ 3960 դրամ	1 տարվանը՝ 8100 դրամ

Բաժանորդագրությունը իրականացնում են՝

Գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնները

«Հայփոստ»,
«Հայմամուլ»,
«Պրես-Ատտաշե»

կազմակերպությունները

ՀԵՏԱԲՐԲԻՐ Է...

ԿՈԿՈՍԻ ԶԵԹԻ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կոկոսյան արմավենու (*Cocos nucifera*) հայերեն անվանումը հնդընկուզենի է: Արմավենիների ընտանիքին պատկանող այս տեսակն ապրում է ավելի քան մեկ դար՝ հասնելով մինչև 30 մ շենքի բարձրության: Բազմանում է պտղի մեջ գտնվող կոկոսյան ընկույզի միջոցով: Ընկույզի վրա կան 3 փոքրիկ անցքեր, որոնցից դուրս են գալիս ծիլերը: Պտուղը գործնականում չի քայքայվում աղաչրում և ընկնելով մայր ծառից՝ կարող է օվկիանոսի ջրի հոսքի միջոցով անցնել մի քանի հազար կիլոմետր հեռավորություն:

Հայտնվելով նոր ցամաքի վրա՝ արևադարձային գոտու կլիմայական պայմաններում սկսվում է բազմանալ: Մշակվում է մուլորակի արևադարձային գոտիներում, հայրենիքը Պոլինեզիայի ծովամիջա շրջաններն են: Մուլորակի վրա աճող հնագույն ծառերից մեկն է: Կոկոսներից ու ծաղկաբույլերից ստանում են շաքար և օգտագործում գինու արտադրության մեջ: Բույսի խոշոր պտուղը բաղկացած է արտաքին թաղանթից, ընկույզից և դրանց միջև գտնվող թելիկավոր շերտից, դրանից պատրաստվում են թելեր, խսիրներ, խոզանակներ և այլն: Կոկոսի միջուկն ուտելի է, իսկ դրանից ստացած յուղն օգտագործվում է կենցաղում և օճառի արտադրությունում:

Կոկոսի ընկույզից պատրաստում են ափսեներ, գավաթներ, կանթեղներ, զարդեր: Կոկոսյան արմավենու տերևները կիրառվում են անասնապահության մեջ, դրանցից պատրաստում են կոլոններ, տների տանիքների համար ծածկեր, իսկ ճյուղը համարվում է խաղաղության խորհրդանիշ: Կոկոսյան արմավենու փայտանյութն օգտագործվում է որպես շինանյութ: Պտղի միջուկի ներսում գտնվում է քաղցրավուն, սառնոտ հեղուկ, որի մի մասը պնդանում է պտղի հասունացման շրջանում: Մ.թ. 2000 տարի առաջ, հնդկական թերակղզու Մալաբար մարզի ծովամիջա բնակիչները պատրաստում էին մի խառնուրդ. բաղադրության մեջ կար սև պղպեղ, հիլ, քրքում, կոճապղպեղ եւ կոկոսի կաթ: Այս խառնուրդը նրանք լցնում էին իրենց ամենօրյա ուտելիքի՝ բրնձի շիլայի վրա: Խառնուրդը հիմք է ծառայել հանրահայտ «Կարի» համեմունքի համար: Կոկոսի պտղի ամուր ընկույզի մեջ գտնվող հյութը պարունակում է մեծ քանակությամբ B խմբի վիտամիններ, որի շնորհիվ բարելավվում է մաշկի և մազերի վիճակը: Կոկոսի կաթ ստանալու համար պետք է քերել միջնապատի փափուկ մասը և ստացված խյուսի վրա լցնել կոկոսի հյութ: Տեսողության ամրապնդման համար՝ շա-



բաթը 2 անգամ խմել 50 մլ կոկոսի կաթ՝ խառնած հավասար քանակի ջրի հետ: Կոկոսի ընկույզի մեջ պարունակվում է նաև կալիում, ֆոսֆոր, կալցիում, C և E վիտամիններ: Կոկոսի փափուկ մասը վերականգնում է ուժերը հիվանդություններից հետո, ամրապնդում օրգանիզմի դիմադրողականությունը: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Օվկիանիայի Ֆիջի կղզու զինվորական բժիշկները հայտնաբերեցին, որ չիասած ընկուզենու հյութը կարող է փոխարինել արյան պլազմայի: Կոկոսյան արմավենու պտուղներով սնվող Ֆիլիպինների, Շրի-Լանկայի, Սոլոմոնյան կղզիների և այլ վայրերի բնիկները հազվադեպ են հիվանդանում շաքարախտով, հիպերտոնիայով:

Հին Հնդկաստանում լայնակի օգտագործվող կոկոսի ձեթով ատամները մաքրելը ատամնաբուժության մեջ ավելի մեծ տարածում է գտնում: Այս մեթոդի կողմնակիցները նշում են, որ կոկոսի ձեթի միջոցով մարդիկ ոչ միայն կարող են սպիտակեցնել ատամները, այլ նաև մաշկն ավելի վառ դարձնել, ինչպես նաև պաշտպանվել մրսածությունից ու հոգնածությունից:

Կոկոսի ձեթը հարուստ է բազմաթիվ օգտակար հատկություններով: Պատրաստման համար անհրաժեշտ է կոկոսի կեղևը լավ քերել, քամել, կստացվի ձեթ, որն ունի թեթև, նուրբ բուրմունք: Օգտագործվում է այրվածքների դեպքում՝ որպես ցավազրկող, կանխում է բշտիկների առաջացումը, պաշտպանում արևից, բարձրացնում տրամադրությունը, օժտված է վերքամոքիչ հատկությամբ: Բացի այդ, պաշտպանում է միջատների խայթոցներից: Կոկոսի ձեթը օգտագործվում է նաև տաճարներում՝ կանթեղների մեջ, որի աստվածային բուրմունքը տարածվում է եկեղեցու վրա:

Կոկոսի պտուղներն իրական պատուհաս են բնակիչների համար, օրինակ՝ Սոլոմոնյան կղզիներում դժբախտ պատահարների հիմնական մասը կապված է կոկոսի պտուղների պատճառած վնասվածքների հետ: Հաջորդ վտանգն այն է, որ կոկոսի (պտուղների) պատրաստուկները կարող են ծանր ալերգիկ երևույթներ առաջացնել:

Լիլիթ Գասպարյան

ԱԳՐԱԼԵՐԱՏՈՒԼ
AGRONEWS
Հասցեն՝ Երևան, Մամիկոնյանց 39ա, հեռ.՝ 23-21-02, ֆաքս՝ 23-03-80
E-mail: asrc@cln.am կայք http://www.asrc.am

ՀԻՄՆԱԳԻՐ ՀՐԱՏԱՐԱՎԻՉ
ՀՀ Գյուղատնտեսության (նախարարություն) «Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն» ՓԲԸ
Տնօրեն **Ա. ՎԱՀՆՅԱՆ**
Գլխավոր խմբագիր և համարի պատասխանատու՝ **Լ. ՇԱԽՆԱԶԱՐՅԱՆ**

Տպաքանակ՝ 1100
2 տպագրական մամուլ գրանցման թիվ՝ 01 ՄՕ00226
դասիչ՝ 69105
պատվեր թիվ՝ 29
ստորագրված է տպագրության 14.04.2016 թ.
տպագրվում է ԳԱՀԿ տպարանում, Երևան, Մամիկոնյանց 39ա